

- 150 Եւ սայլն ալ սնարք առնես
 ի վերայ հողուն քնանաս .
 Գլուխըս ի վեր կալնես ,
 քան զԱստուած այլ ճար չունենաս :
 Միթէ իմ Տէր ինձ խղճաս ,
 155 դարիս տնանկիս զթաս .
 Փրկիչ 'լ օգնական լինաս ,
 փորձանացս որ դան ի վերաս :

Եւ յետ ճաշուն առեալ զՀողեւոր տէրն
 եւ զՂուկաս եպիսկոպոսն եւ զայլսն՝ տանէին
 160 ի քաղաքն եւ երկու կողմանց բազմամբոխ
 ժողովուրդն որպէս պարիսպ էր՝ քրիստո-
 նայք եւ այլազգիք : Եւ հարկանէին կանայք
 զչրթունս եւ ձայն իմն ածէին , ըստ սովորու-
 թեան Արապաց . նաեւ յեկեղեցիս հանդիսի
 165 աւուրս այսպէս առնէին կանայք : Եւ այսպէս
 մեծաւ փառօք մուծին ի դարսասն : Եւ ես
 տխուր զիմօք եւ լի սրզով երթայի մինակ ի
 հեռաստանէ , սրբէի զաչս եւ դոհանայի զԱս-
 տուծոյ : Եւ այնօրն խոճայ Պէտրկն մեծ ընթրիս
 170 արար եւ ուրախութիւն մինչեւ յերկունն :
 Եւ կայր Հալաս պարձր պուրճ մի . այժմ
 մզկիթ է . եւ ասին թէ զանկալատուն է :

14. ՄԱՐԱՇ—ԿԵՍԱՐԻԱ—ԱՆԿԻԻՐԻԱ—
 Կ. ՊՈՂԻՍ—ԼՎՈՎ,

Ապա նախասացեալ Արտալն գնեց հինգ
 ձի եւ հարիւր զուռուշ խարճի երեւո . եւ Պետ-
 րոս անուն մշակ մի եւ Ախիճան մշակ մի հետ

1 արտալն :